ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1920 թ. դեկտեմբեր—1921 թ. ապրիլ)

ԲԱՂԴԱՍԱՐ ԹԵՎՈՍՅԱՆ

Կոմունիստական կուսակցության և նորաստեղծ սովետական իշխանության առջև ծառացած սոցիալ-տնտեսական բազմաթիվ պրոբլեմներից էր գործազրկության վերացումը, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական մեծ նշանակություն։ Այդ է պատճառը, որ սովետական իշխանության գոյության առաջին իսկ օրերից գործազրկության վերացումը գտնվել է կուսակցության և նրա մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի ուշադրության կենտրոնում։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ գործազրկությունը միանգամից չի կարելի վերացնել[1]։ 1918 թ. գրած «Սովի մասին» նամակում նա նշում էր. «Առանձին- առանձին և ցրված ձևով չի կարելի սովն ու գործազրկությունը հաղթել։ Հարկավոր է առաջավոր բանվորների մասսայական «խաչակրաց արշավանք» կատարել դեպի հսկայական երկրի բոլոր ծայրերը։ Հարկավոր են գիտակից և կոմունիզմին անսահմանորեն նվիրված պրոլետարիատի տասնապատիկ ավելի երկաթե ջոկատներ»[2]։

Հայաստանում ևս սովետական իշխանության առաջին տասնամյակում կոմունիստական կուսակցության առջև կանգնած հրատապ լուծում պահանջող պրոբլեմներից մեկը բնակչությանն աշխատանքով ապահովելը և նրան սովի ճիրաններից փրկելն էր։ Սակայն պատմատնտեսագիտական գրականության մեջ գործազրկության վերացման համար Հայաստանի կոմկուսի և սովետական իշխանության պայքարը դեռևս անհրաժեշտ լուսաբանման չի արժանացել, չնայած գործազրկությունը մյուս հանրապետություններում այնպիսի սուր բնույթ չի կրել, ինչպես Հայաստանում[3]։ Դա պայմանավորված էր ոչ միայն Հայաստանի ժողովրդական տնտեսության ծայրաստիճան քայքայմամբ, ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության համեմատ նրա վերականգնման շրջանի ավելի երկար տևողությամբ, այլև սակավահողությամբ, ներգաղթով և դրան ուղեկցող ագրարային գերբնակչությամբ։

Նախասովետական Հայաստանում գործազրկության հաշվարկ չի կատարվել, բայց դա չի նշանակում, թե այն գոյություն չի ունեցել։ Նույնիսկ դաշնակցության պաշտոնական մամուլը, անդրադառնալով գործազրկության հարցին, հարկադրված էր խոստովանել, որ «անգործները բավական խոշոր թիվ մը կկազմեն Հայաստանի սահմաններուն մեջ, հասարակական ամբողջ աշխատանքը բաժանված է գլխավորապես երկու դասերու վրա՝ պաշտոնեության և առևտրականության։ Ապրուստի այլ միջոց և աշխատանքի այլ ճամբա, պաշտոնյա կամ առևտրական ըլլալե զատ, գրեթե չի կա»[4]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 319։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 492—493։

3 Այդ պրոբլեմի առանձին հարցեր լուսաբանվել են Գ. Գեղամյանի «Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին» (Երևան, 1978) և Վ. Խաչատրյանի «Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը 1828—1978» (Երևան, 1979) մենագրություններում։

4 «Աշխատանք», 12. IV. 1919։

Սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրից Հայաստանի Հեղկոմի միջոցառումներում հատուկ ուշադրություն էր դարձվում բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելուն և նրան աշխատանքով ապահովելուն։ Հայաստանը սովետական սոցիալիստական հանրապետություն հռչակելու մասին Հեղկոմի առաջին իսկ դեկլարացիայում աշխատավորությանը կոչ էր արվում անցնելու անդուլ, ստեղծագործ աշխատանքի[5]։ Հայաստանում արդյունաբերական ձեռնարկություններին և սովետական բոլոր հիմնարկներին համապատասխան որակավորում ունեցող բանվորական ուժ մատակարարելու գործը դրվեց աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի վրա, որը ստեղծվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ին[6]։ Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատը, ձեռնամուխ լինելով այդ գործին, ըստ մասնագիտության և արհեստի աշխատունակ բոլոր քաղաքացիների համար աշխատանքը հայտարարեց պարտադիր[7]։

Բացի այն, որ երկիրն ավերվել և կործանման եզրին էր հասցվել, իմպերիալիստական պատերազմի և դաշնակցության անփառունակ տիրապետության ժամանակ Հայաստանում կուտակվել էին գաղթականության հոծ զանգվածներ, երկիրը հեղեղված էր որբ ու անտեր երեխաներով, կադրային բանվորները կամ գտնվում էին զինվորական ծառայության մեջ, կամ էլ իրենց գոյությունը պահպանելու համար հեռացել էին գյուղերը՝ զբաղվելու գյուղատնտեսությամբ կամ մանր առևտրով։ Դա բանվոր դասակարգի ապադասակարգայնացման վտանգավոր պրոցես էր, որի կանխումը բախտորոշ նշանակություն ուներ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման գործում։

Հաշվի առնելով հանրապետությունում կենսագործվող ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի նախաձեռնությամբ 1920 թ. դեկտեմբերին ստեղծվեց հանրապետության տեխնիկական ուժերի հաշվառման հանձնաժողով, իսկ դեկտեմբերի 31-ին, Հեղկոմի հատուկ հրամանով, Հայաստանում պաշտոնավարող և ազատ տեխնիկական բոլոր ուժերը, ինչպես նաև ամեն տեսակի մասնագետ ինժեներները պարտավոր էին երեք օրվա ընթացքում ենթարկվել հաշվառման, հակառակ դեպքում նրանք դիտվում էին աշխատանքի դասալիքներ և ենթարկվում պատասխանատվության[8]։ Վերոգրյալին հետևեց աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի 1921 թ. հունվարի 3-ի հրամանը՝ բանվորական ուժերի հաշվառման և բաշխման բաժին կազմակերպելու մասին[9]։ Այս բաժինը փաստորեն կատարելու էր աշխատանքի բորսայի ֆունկցիաներ։ Բոլոր հասարակական-պետական կամ մասնավոր հիմնարկ-ձեռնարկությունները պարտավոր էին բանվորական ուժ վարձել այս բաժնի միջոցով։ Հրամանում նախազգուշացվում էր, որ տվյալ բաժնից անկախ աշխատանքի ընդունվողները զրկվելու են աշխատանքից։ Մասնավոր սեփականատերերի կամայականությունների դեմ պայքարելու նպատակով նույն հրամանը նախազգուշացնում էր, որ եթե մասնավոր անձը բանվոր կամ ծառայող վարձում է բաժնից անկախ, ենթարկվում է 10 հազար ռ. չափով տուգանքի կամ մեկ շաբաթից ոչ պակաս ազատազրկման[10]։

Չնայած հրամանի խստությանը տեղերում բանվորական ուժի վարձումը փաստորեն կատարվում է բաժնից անկախ։ Այդ իսկ պատճառով աշխատան-

---

5 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, էջմիածին, 1921, էջ 5։

6 Հայկական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ), ֆ. 120, ց. 1, գ. 4, թ. 12։

7 «Խորհրդային Հայաստանի 5 տարին, 1920—1925», Երևան, 1926, էջ 347։

8 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, էջ 41—42։

9 Նույն տեղում, էջ 47—48։

10 Նույն տեղում։

բի ժողովրդական կոմիսարիատը ստիպված էր հունվարի 16-ի հրամանով զգուշացնել բոլոր հիմնարկություններին, որ բանվորներ ու պաշտոնյաներ ընդունելու կամ հեռացնելու գործը պետք է կատարվի բացառապես բանվորական ուժերի հաշվառման և բաշխման բաժնի միջոցով։ Այս հրամանին չենթարկվողները պատասխանատու էին հեղափոխական տրիբունալի առջև[11]։ Սակայն, չնայած ձեռնարկված վերոհիշյալ միջոցառումներին, այդ ժամանակ սովետական իշխանությունը հնարավորություն չուներ բոլոր ցուցակագրվածներին ապահովել մասնագիտական աշխատանքով։ Նրանց մի մասը որպես գործազուրկ մնում էր բաժնում հաշվառման մեջ և պարտավոր էր կատարել հանձնարարված ամեն մի աշխատանք։

1920 թ. դեկտեմբերի վերջից մինչև դաշնակցականների 1921 թ. փետրվարյան արկածախնդրությունը բանվորական ուժերի հաշվառման և բաշխման բաժնի տվյալներով գործազուրկների թիվը կազմել էր 2978 մարդ (2132 կին և 846 տղամարդ)[12]։ Այդ ընթացքում բաժինը աշխատանքի էր ուղարկել 835 տղամարդ և 322 կին[13]։ Վերոհիշյալ թվական տվյալները ցույց են տալիս, որ սովետական կարգերի հաստատման առաջին ամիսներին գործազուրկների շարքում գերակշռում էր կանանց թիվը։ Եվ դա բնական է, քանի որ տղամարդկանց մեծ մասը գտնվում էր զինվորական ծառայության մեջ։

Շուտով բանվորական ուժերի հաշվառման և բաշխման բաժիններ բացվեցին նաև Երևանի, Ղարաքիլիսայի (Կիրովական), Աշտարակի և Վաղարշապատի (Էջմիածին) գավառային հեղկոմներին կից, որոնք պետք է զբաղվեին գավառներում աշխատուժի հավաքագրման և բաշխման հարցով[14]։ Այն գործազուրկները, որոնք բանվորական ուժերի հաշվառման և բաշխման բաժնում հաշվառման մեջ էին, ստանում էին նյութական օգնություն։ Այդ գործում մեծ դեր էր կատարում սոցապ ժողկոմատը։ Վերջինիս ջանքերով 1921 թ. հունվարին Երևանում բացվեցին երկու ճաշարան և թեյարան, որտեղ գործազուրկները և գաղթականները կարող էին ձրի ճաշ ստանալ[15]։ Սննդի նման կետեր էին բացվել նաև այն վայրերում, որտեղ գաղթականությունը մեծ չափերի էր հասնում (Զանգիբասար (Մասիս), Վեդիբասար (Վեդի) և այլն)[16]։

Ի տարբերություն Սովետական Ռուսաստանի, որտեղ 1917 թ. դեկտեմբերի 11-ին ընդունվել էր «Գործազրկության դեպքում ապահովագրության մասին» կանոնադրությունը, ըստ որի բանվորական ուժ վաճառողները պարտավոր էին գործազրկության տեղական գանձարկղ մուծել վճարվող աշխատավարձի առնվազն 3%-ը[17], Հայաստանում նման գանձարկղեր ստեղծվեցին միայն 1922 թ. երկրորդ կեսին։ Գործազուրկներին մինչ այդ տալիս էին միայն սնունդ։ Հայաստանի արհեստակցական միությունների 1921 օգոստոսին կայացած I համագումարի նյութերում ընդգծվում էր, որ մինչև փետրվարյան դեպքերը ցուցակագրված գործազուրկներին օգնությունը սահմանափակվել է միայն սոցապ ժողկոմատի միջոցով հաց բաժանելով[18]։ Համագումարում արձանագրվեց, որ միայն Երևանում գործազուրկների թիվը հասնում է 1186-ի, այն դեպքում, երբ քաղաքի զբաղված բանվորական ուժը

---

11 «Կոմունիստ», 16. I. 1921։

12 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 120, ց. 1, գ. 36, թ. 342։

13 Նույն տեղում։

14 «Կոմունիստ», 11. II. 1921։

15 Նույն տեղում, 22. I. 1921։

16 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 1, թ. 41։

17 К. И. Суворов, Исторический опыт КПСС по ликвидации безработицы, М., 1968, с. 54; Л. С. Рогачевская, Ликвидация безработицы в СССР, М., 1973, с. 66.

18 «Հեղհրդային Հայաստան», 27. VIII. 1921։

կազմում էր 3497 մարդ[19]։ Իսկ Ալեքսանդրապոլում հունիսին օգնություն էր ստանում 2000 մարդ, ընդ որում, այդ թիվը օրական 200 մարդով աճում էր[20]։

Գործազուրկների աշխատանքի տեղավորման հարցով զբաղվում էին նաև արհեստակցական միությունները։ Նրանք կազմակերպում էին արհեստանոցներ, որտեղ աշխատանքի էին ընդունվում միևնույն մասնագիտություն ունեցող գործազուրկները։ 1921 թ. հունվարի 29-ին «Կոմունիստ» թերթը գրում էր, որ կարուձևի արհեստակցական միության վարչությունը անգործ բանվորներին հրավիրում է ցուցակագրվելու՝ բացվելիք արհեստանոցում աշխատելու համար։ Նման արհեստանոցներ կազմակերպում էին նաև մյուս վարչությունները։

Հանրապետության աշխատունակ բնակչությանն աշխատանքով ապահովելու գործում զգալի նշանակություն ունեցավ Հայաստանի Հեղկոմի և հողժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 28-ի՝ հողերի ազգայնացման մասին դեկրետը, որտեղ ասվում էր. «Բանվորադյուղացիական ազգաբնակչության հողազուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետության բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նադելի, եկեղեցական, վանքային, վակուֆային, մեչետային, իրավաբանական անձերի և մասնավոր հողերը դառնում են Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության սեփականություն»[21]։ Սակայն պետք է նշել, որ Հայաստանում հողերի ազգայնացումը չտվեց այն արդյունքը, ինչ սովետական մյուս հանրապետություններում։ Դրա պատճառն այն է, որ Հայաստանում խոշոր հողատիրությունը զարգացած չէր, և հողերի ազգայնացումն ուներ ավելի շատ քաղաքական, քան տնտեսական նշանակություն։ Այդուհանդերձ, դեկրետը զգալիորեն նպաստեց չքավոր և միջակ գյուղացիական տնտեսությունների զարգացմանը։ Գյուղացիության անմիջական օգտագործմանը հանձնվեց 1.420.000 դեսյատին հող[22]։

Գյուղատնտեսական ուժերն արդյունավետ օգտագործելու և գյուղատնտեսության մեջ նոր սկզբունքների արմատավորումն ամրապնդելու նպատակով 1921 թ. փետրվարի 9-ին Հայաստանի Հեղկոմի դեկրետով մոբիլիզացվեցին նաև գյուղատնտեսական մասնագետները[23]։

Հանրապետության սակավահողության պատճառով գաղթականության մի մասը չապահովվեց հողով, իսկ մյուս մասն էլ, որ հող էր ստացել, չուներ ինվենտար, սերմացու և քաշող ուժ՝ այն մշակելու համար։ Այստեղ էր, որ օգնության ձեռք մեկնեցին եղբայրական հանրապետությունները։ Չնայած Սովետական Ռուսաստանը գտնվում էր խիստ կարիքի մեջ, Վ. Ի. Լենինի կարգադրությամբ, Հայաստանին տրամադրվեց 2 մլդ. ռ. (600 հազար ռ. ոսկով) սովետական թղթադրամ։ Իրենց սուղ միջոցներից օգնություն ուղարկեցին նաև մյուս հանրապետությունները։ 1921 թ. հունվարի 6-ին «Կոմունիստ» թերթը գրում էր. «Հայաստանի աշխատավորությունը արդեն զգում է, որ իր թիկունքում կանգնած է վիթխարի Ռուսաստանի անհաղթահարելի ուժը»։

Հայաստանի կառավարությունը բոլոր հնարավոր միջոցները ներդնում էր օգնելու գյուղացիներին՝ ստացած հողը մշակելու գործում։ Հեղկոմի 1921 թ. ապրիլի 10-ի դեկրետով բռնագրավումից ազատ էր համարվում սերմացուն. միաժամանակ ընդգծվում էր, որ ցանքսերից ստացվող բերքը ամբողջովին

---

19 Նույն տեղում։

20 Նույն տեղում, 30. VI. 1921։

21 «ՀՍՀՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, էջ 31։

22 Գ. Շ ա ռ ո յ ա ն, Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում 1920—1929 թվականներին, Երևան, 1962, էջ 10։

23 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Երևան, 1960, էջ 474—475։

պատիանում է տիրոջը և ենթակա չէ բռնագրավման[24]։ Սա փաստորեն ռազմական կոմունիզմի քաղաքականությունից հրաժարվելու ուղղությամբ առաջին միջոցառումն էր, որը բարերար ազդեցություն ունեցավ մենատնտես գյուղացիության վրա՝ նպաստելով նրա արտադնացության սահմանափակմանը։

Ի տարբերություն Սովետական Ռուսաստանի, որտեղ կային արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ, որոնց ազգայնացմամբ մասամբ լուծվում էր բանվորական ազատ ուժի աշխատանքի հարցը, Հայաստանը զուրկ էր այդ հնարավորությունից։ Նրա արդյունաբերությունը (բացառությամբ պղնձարդյունաբերության) հիմնականում կապված էր տեղական գյուղատնտեսական հումքի վերամշակման հետ։ Հետևաբար, արդյունաբերության վերականգնումը և աշխատանքը կապված էր գյուղատնտեսության զարգացման հետ։ Այդ իսկ պատճառով մեր հանրապետության համար գյուղատնտեսության վերականգնումն առաջնահերթ նշանակություն ուներ։ Հայաստանի ժողովրդական տնտեսության կարգավորման գործում մեծ նշանակություն ունեցավ Հեղկոմի 1921 թ. հունվարի 21-ի դեկրետով ժողովրդական տնտեսության խորհրդի (ԺՏԽ) կազմակերպումը[25]։ ԺՏԽ-ն պետք է մշակեր տնտեսության կարգավորման ընդհանուր ծրագիր, ինչպես նաև համաձայնեցներ ու միացներ կենտրոնական և տեղական տնտեսական հիմնարկների գործունեությունը[26]։

Այդ ժամանակաշրջանում Հայաստանում մեծ թիվ էին կազմում որբ և անօթևան երեխաները, որոնց փրկության և դաստիարակության հարցը չէր կարող դուրս մնալ կուսակցության և կառավարության ուշադրությունից։ Հանրապետության Հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի որոշման համաձայն, սոցիալական ապահովության կոմիսարիատի հսկողության ներքո գտնվող որբանոցներում, որոնք հետագայում անցան լուսժողկոմատին, խնամվում և դաստիարակվում էին մինչև 16 տարեկանները, իսկ 16-ից բարձր տարիք ունեցողները, որպես գործազուրկներ, ցուցակագրվում էին բանվորական ուժերի հաշվառման և բաշխման բաժնում ու ստանում նպաստ[27]։ Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի 1921 թ. հունվարի 21-ի որոշմամբ այն անչափահասները (մինչև 14 տարեկան), որոնք արդեն աշխատում էին, անմիջապես պետք է ազատվեին աշխատանքից և տեղավորվեին դպրոցներում, որտեղ պետք է ստանային համապատասխան նպաստ[28]։ Բացառիկ դեպքերում, երբ անչափահասը գտնվում էր ծայրաստիճան ծանր տնտեսական վիճակում և անհնար էր նրա ապահովությունը սոցապ մարմինների կողմից, նա կարող էր աշխատել, սակայն 4 ժամից ոչ ավելի՝ վարձատրվելով լրիվ բանվորական օրվա չափով[29]։

Այսպիսով, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո կոմունիստական կուսակցությունը ջանքեր չէր խնայում բնակչությանն աշխատանքով ապահովելու, գործազրկության ծանր հետևանքները մեղմացնելու համար։ Սովետական իշխանության առաջին ձեռնարկումները խոշոր նշանակություն ունեցան հանրապետության աշխատանքի շուկան կարգավորելու գործում։ Անցնելով նոր տնտեսական քաղաքականությանը, որը լայն հնարավորություններ էր ընձեռում մանր արտադրության զարգացման համար, կուսակցությունը միջոցներ էր մշակում ներգաղթի և գյուղի շերտավոր-

---

24 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ II, էջմիածին, 1921, էջ 12—13։

25 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, էջ 84—85։

26 Նույն տեղում։

27 «Կոմունիստ», 24. XII. 1920։

28 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ I, էջ 104։

29 Նույն տեղում։

ման հետևանքով աճող գործազրկության դեմ վճռական պայքար մղելու համար։

ПЕРВЫЕ МЕРОПРИЯТИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ ПО ЛИКВИДАЦИИ БЕЗРАБОТИЦЫ В АРМЕНИИ (декабрь 1920—апрель 1921 гг.)

БАГДАСАР ТЕВОСЯН

Резюме

После Октябрьской революции Советское правительство и Коммунистическая партия встали перед необходимостью решения ряда неотложных социально-экономических проблем, среди которых особое значение имела ликвидация безработицы. С первых же дней установления Советской власти в Армении в центре внимания Ревкома оказались вопросы трудоустройства населения республики. Исходя из тяжелых условий, сложившихся в Армении, и учитывая проводимую в республике политику военного коммунизма, Ревком предпринял ряд мероприятий, призванных смягчить безработицу и создать предпосылки для дальнейшей ее ликвидации. Реализация этих мероприятий имела огромное значение для регулирования рынка труда республики в первые месяцы существования Советской власти.